ՆԵՐՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ԱՐԺԵՔԱՅԻՆ ԲԱՂԱԴՐԻՉԸ
(երևանցիների և երևանաբնակ արցախցիների օրինակով)

Լիլիթ Հակոբյան[*]

Արդի հայ հասարակությունը և հայկական մշակույթը հետազոտողները դժվարանում են տեղայնացնել տարանջատման ընդունված մոդելներում՝ արևմտյան-արևելյան, ինդիվիդուալիստական-կոլեկտիվիստական (հետազոտողներն ավելի հաճախ խոսում են սահմանային դրության մասին), ինչն ավելի բազմազան և ոչ միանշանակ պատկերի է վերածվում վերջին տարիների փոխակերպումների հետևանքով: Ի հավելումն՝ ներմշակութային համատեքստում ևս կան տարբերություններ՝ կապված տարածաշրջանային (մարզային) ինքնության հետ: Առօրյա խոսակցական դիսկուրսում հաճախ նկատելի են խմբերի (ըստ տարածաշրջանային-մարզային ինքնության) հարաբերական սահմանազատումները հասարակության ներսում: Այդպիսի սահմանազատումներն ունեն դինամիկ բնույթ, ինչը ենթադրում է, որ առանձնացումը հարաբերական բնույթ է կրում: Հետազոտության *արդիականությունը* բխում է այն հանգամանքից, որ հայ հասարակության մեջ անհրաժեշտ է ուսումնասիրել ներմշակութային խմբերի միջև սահմանները և դրանց դինամիկությունը, քանի որ առօրյայում տարածված են նեգատիվ երանգավորմամբ հատկությունների և արժեքային տարբերությունների փոխադարձ վերագրումները, ինչը կարող է հան-

[*] «Նորավանք» ԳԿՀ Տեղեկատվական հետազոտությունների կենտրոնի փորձագետ:

գեցնել խմբերի ստերեոտիպային ընկալման և, ընդհանուր առմամբ, բացասաբար անդրադառնալ սոցիալական համերաշխության աստիճանի վրա: Հետազոտությունն իրականացվել է՝ հասկանալու համար նաև, թե այդ սահմանազատումներում որքանով է դրսևորվում արժեքային բաղադրիչը: Հետազոտության խնդիրներն են՝

- բացահայտել, թե երևանցիների և երևանաբնակ արցախցիների փոխադարձ սահմանազատումն ինչ գործոնների վրա է հիմնված,
- պարզել խմբերի միջև փոխադարձ վերագրումները և դրանցում արժեքային բաղադրիչի դերը,
- համեմատել սեփական և համեմատական խմբին վերագրվող արժեքային տարբերությունները:

Հետազոտության վարկածի համաձայն՝ *ենթադրվում է, որ Հայաստանում միջենթամշակութային սահմանների կառուցման մեջ փոխադարձ վերագրումներում արտահայտված է արժեքային ասպեկտը:*

Տեսամեթոդաբանական հիմքերը

Հետազոտությունն իրականացվել է հարցումների միջոցով, որոնց մասնակցել են երևանցի և երևանաբնակ արցախցի 18-25 տարեկան երիտասարդներ (յուրաքանչյուր խմբից՝ 30-ական երիտասարդ): Հարցվողները լրացրել են 3 հարցաթերթ, որոնք մշակվել են՝ հիմնվելով Շ.Շվարցի բազային արժեքների ուսումնասիրման մեթոդիկայի, Է.Բոգարդուսի սոցիալական դիստանցիաների չափման սանդղակի ու Ա.Մ. Գրաչևայի սեմանտիկ դիֆերենցիալի մեթոդի վրա:

Շվարցի բազային արժեքների ուսումնասիրման մեթոդիկան օգտագործվել է անհատական մակարդակում արժեքային առանձնահատկությունները, ինչպես նաև երևանցիներին ու երևանաբնակ ար-

ցախցիներին վերագրվող արժեքները պարզելու նպատակով: Այն ուղղված է անձի արժեքային պրոֆիլների բացահայտմանը: Հարցարանը կազմված է անձը բնութագրող 40 նկարագրական պնդումներից, որոնք համապատասխանում են Շվարցի տեսության տասը բազային արժեքներին: Միջխմբային վերագրումների տիրույթում հետազոտության մասնակիցները գնահատել են, թե Շվարցի արժեքների չափման մեթոդիկայի յուրաքանչյուր նկարագիրը որքանով է բնորոշ *երևանցի տիպիկ երիտասարդին* և *արցախցի տիպիկ երիտասարդին* ՝ հիմնվելով անհատական պատկերացումների վրա: Մեթոդիկայի հիմքում ընկած է Շ.Շվարցի բազային արժեքների տեսությունը, ըստ որի՝ արժեքները սոցիալական և անձնային փոփոխման գործընթացներն ուսումնասիրելու համար կարևոր բացահայտող գործոններ են: Մի կողմից՝ արժեքները մշակույթի հիմնական տարրերն են, որոնք ազդում են վարքային դրսևորումների վրա, մյուս կողմից՝ արժեքներն անմիջական փոփոխություն են կրում հասարակության անդամների վարքի, երկրի տնտեսական, քաղաքական, սոցիալական ենթահամակարգերի փոփոխության հետ մեկտեղ: Հոգեբան Շ.Շվարցն իր մոտեցման մեջ առաջ է քաշել այն միտքը, որ յուրաքանչյուր արժեքի հիմքում ընկած է մարդկային որոշակի հիմնարար պահանջմունք [1, 2]: Հիմնվելով մշակութային արժեքների չափողական մոտեցման վրա՝ Շվարցն առանձնացնում է տասը բազային արժեքներ.

- *Իշխանություն, ուժ (Power),* սոցիալական կարգավիճակ, իշխանություն մարդկանց և ռեսուրսների նկատմամբ *արժեքի* հիմքում ընկած է սոցիալական վերահսկողություն ունենալու նպատակը:
- *Հեռքերում (Achievement) արժեքի* հիմքում ընկած նպատակը անձնային հաջողությունն է, սոցիալական ստանդարտների համապատասխան կոմպետենտության ապահովումը:
- *Հեդոնիզմ (Hedonism) արժեքի* հիմքում ընկած նպատակը հաճույքը կամ հուզական բավարարվածությունն է:

- *Ստիմուլյացիա (Stimulation) արժեքի* հիմքում ընկած է օրգանիզմի օպտիմալ ակտիվությունն ապահովելու համար նորարարության, փոփոխության բնական-ֆիզիոլոգիական պահանջմունքը:
- *Ինքնուրույնություն (Self-Direction) արժեքի* դրդապատճառային հիմքն է կազմում վարքի ձևերի, մտածողության և ստեղծագործ ակտիվության ինքնուրույնությունը:
- *Ունիվերսալիզմ (Universalism) արժեքի* մոտիվացիոն հիմքն են կազմում հասկացումը, հանդուրժողականությունը, մարդկանց և բնության պահպանման ցանկությունը:
- *Կամեցողություն (Benevolence) արժեքի* հիմքում ընկած են հարազատների բարօրության պահպանումը և ավելացումը:
- *Ավանդականություն (Tradition) արժեքի* հիմքում ընկած են մշակութային և կրոնական սովորույթների նկատմամբ հարգանքն ու պահպանումը:
- *Կոմֆորմություն (Conformity) արժեքի* հիմքում ընկած է սոցիալական սպասումներին հակասող կամ ուրիշներին վնասող գործողությունների զսպումը:
- *Անվտանգություն (Security) արժեքի* հիմքում ընկած է հասարակության, հարաբերությունների և սեփական անձի անվտանգության և կայունության ապահովումը:

Արժեքների հիմքում ընկած շարժառիթների բնույթից ելնելով՝ բազային արժեքները խմբավորվում են չորս աժեքային կողմնորոշումների մեջ՝ *ինքնատրանսցենդենտություն* (ունիվերսալիզմ, կամեցողություն), *պահպանողականություն* (կոմֆորմություն, ավանդականություն, անվտանգություն), *ինքնակատարելագործում* (իշխանություն, ձեռքբերումներ, հեդոնիզմ), *փոփոխություններին բաց լինելու* (հեդոնիզմ, ստիմուլյացիա, ինքնուրույնություն) (տե՛ս *Գծապատկեր 1*).

Գծապատկեր 1

Արժեքների երկբևեռ չափումներն ըստ Շ.Շվարցի բազային արժեքների տեսության

<table>
<tr><td rowspan="4">ուսիսֆ դվմոչդ</td><td colspan="2">Անձի զարգացում, ուղղորդում դեպի հաջողությունը</td><td rowspan="4">ուսիսֆ գոիկամվեՊ</td></tr>
<tr><td>ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԲԱՑ
OPENNESS TO CHANGE
(ինքնուրույնություն, ստիմուլյացիա, հեդոնիզմ)</td><td>ԻՆՔՆԱՀԱՂԹԱՀԱՐՈՒՄ
SELF-TRANSCENDENCE
(ունիվերսալիզմ, կամեցողություն)</td></tr>
<tr><td>ԻՆՔՆԱՀԱՍՏԱՏՈՒՄ
SELF-ENHANCEMENT
(հեդոնիզմ, ձեռքբերումներ, իշխանություն-ուժ)</td><td>ՊԱՀՊԱՆՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
CENSERVATION
(ավանդականություն, կոմֆորմություն, անվտանգություն)</td></tr>
<tr><td colspan="2">Անձի պաշտպանում սպառնալիքից, խուսափում անհաջողությունից</td></tr>
</table>

Արժեքային այս կողմնորոշումները հաշվի առնելով՝ հետաքրքիր է դիտարկել դրանց դերն ու ազդեցությունը հասարակական վարքի դրսևորումների և հասարակության ներսում խմբերի առանձնացման վրա: Ի՞նչ արժեքներ են ընկած այս կամ այն վարքային դրսևորման հիմքում: Ի՞նչ արժեքներ են կրում հայ երիտասարդները, ձևավորված խմբերի կողմից ի՞նչ արժեքային առանձնահատկություններ են վերագրվում միմյանց:

Ա.Մ. Գրաչևայի «Սեմանտիկ դիֆերենցիալը» նախատեսված է միջխմբային ընկալումն ուսումնասիրելու համար: Այն ներկայացնում է որոշակի հատկությունների ամբողջություն, որը հետազոտության մասնակիցները պետք է գնահատեն ըստ սանդղակի՝ համեմատելով սեփական և այլ խմբերի ներկայացուցիչներին: Պահպանելով մեթոդիկայի հիմնական դրույթները՝ հետազոտությանը համապատասխան որոշակի ձևափոխություններ են կատարվել: Հիմնվելով անցած տարիներին կատարված հետազոտությունների վրա՝ առանձնացվել է *քսան հատկություն*, որոնցով առավել հաճախ հայերը բնորոշում են իրենց: Հետազոտության մասնակիցները *0-ից 5* բա-

լային սանդղակով գնահատել են առանձնացված 20 հատկություններ-ի արտահայտվածությունը սեփական անձի մակարդակում, իր ներ-կայացուցչական խմբի մակարդակում և հետազոտվող մյուս՝ համե-մատական խմբի մակարդակում: Տվյալների միջինացված պատկերը ցույց է տալիս, թե այս կամ այն խմբի ներկայացուցիչները միջինն ինչ հատկություններ են վերագրում իրենց՝ անհատական մակարդակում, ինչ հատկություններ են վերագրում իրենց խմբին, ինչպես նաև համեմատական խմբին:

Է.Բոգարդուսի սոցիալական դիստանցիաների մոդիֆիկացված սանդղակն ուղղված է խմբերի դիստանցիան հասկանալուն: Սոցիա-լական դիստանցիայի սանդղակը ցույց է տալիս խմբերի միջև հոգե-բանական մտերմության աստիճանը, որը նպաստում է նրանց կոմու-նիկացիայի դյուրինությանը: Սոցիալական առավելագույն դիստան-ցիան նշանակում է, որ խումբն ավտոնոմ է գործում, հաղորդակցու-թյունն այս դեպքում հիմնականում սիմվոլիկ, ֆորմալ բնույթ է կրում: Նվազագույն սոցիալական դիստանցիան վկայում է այն մասին, որ յուրաքանչյուր խմբի ներկայացուցիչները միմյանց հետ հարաբերու-թյունները կառուցում են՝ հաշվի առնելով և ընդունելով բնորոշ առանձնահատկությունները, յուրօրինակությունները: Տվյալների օբյեկտիվ ստացման և համեմատության նպատակով, բացի երևանցի-ների և արցախցիների խմբերից, չափվել է նաև գյումրեցիների և սփյուռքահայերի նկատմամբ սոցիալական դիստանցիայի աստի-ճանը: Հետազոտության մասնակիցը վերոնշյալ խմբերի ցանկում 1-7 բալանոց սանդղակով գնահատել է այդ խմբերի ներկայացուցչի և իր նմանության աստիճանը երեք տեսանկյուններից՝ ըստ արժեքների, ըստ կենսակերպի և ըստ բնավորության հատկանիշների:

Աղյուսակ 1

Երևանաբնակ արցախցի երիտասարդների կողմից իրենք իրենց, արցախցիների և երևանցիների խմբերին վերագրվող հատկությունների միջինացված տվյալները[1]

Հատկությունների դասակարգումը		
անհատական մակարդակ	արցախցիներին բնորոշ	երևանցիներին բնորոշ
Ընկերասիրություն	Արժանապատվություն	Տաքարյունություն
Արժանապատվություն	Հպարտություն	Հյուրասիրություն
Հարգանք	Հայրենասիրություն	Ազատասիրություն
Հպարտություն	Հարգանք	Արժանապատվություն
Հյուրասիրություն	Տաքարյունություն	Հպարտություն
Հոգատարություն	Հյուրասիրություն	Խորամանկություն
Ներողամտություն	Ազատասիրություն	Քննադատողականություն
Հայրենասիրություն	Ընկերասիրություն	Աշխատասիրություն
Ազատասիրություն	Հոգատարություն	Շահախնդրություն
Աշխատասիրություն	Աշխատասիրություն	Ընկերասիրություն
Քննադատողականություն	Քննադատողականություն	Բամբասկոտություն
Անտարբերություն	Ներողամտություն	Կեղծավորություն
Տաքարյունություն	Բամբասկոտություն	Հոգատարություն
Խորամանկություն	Դաժանություն	Հարգանք
Դաժանություն	Խորամանկություն	Նախանձություն
Վախկոտություն	Նախանձություն	Ներողամտություն
Բամբասկոտություն	Շահախնդրություն	Հայրենասիրություն
Նախանձություն	Անտարբերություն	Անտարբերություն
Շահախնդրություն	Վախկոտություն	Դաժանություն
Կեղծավորություն	Կեղծավորություն	Վախկոտություն

Հետազոտության արդյունքները

Մեր ստացած տվյալների համաձայն՝ երևանաբնակ արցախցի երիտասարդներն իրենց առավել բնորոշ են համարում *ընկերասիրություն* ու *արժանապատվություն* հատկությունները (տե՛ս *Աղյուսակ 1*)։ Այս խմբի երիտասարդներն արցախցու կերպարին (իրենք իրենց խմբին) առավել բնորոշ են համարում *արժանապատվությունը* և

[1] Աղյուսակում հատկությունները տեսակավորված են գույներով։ Կանաչ գույնով ներկված են առավել բնորոշ համարվող հատկությունները, առավել բաց՝ դեղնականաչավուն երանգներով ներկված են միջին արտահայտվածության հատկությունները և նարնջագույն երանգից սկսած՝ ներկայացված են այն հատկությունները, որոնք տվյալ խմբերին բնորոշ չեն՝ ըստ գնահատող խմբի։

հպարտությունը: Առհասարակ, սեփական խմբին առավել բնորոշ համարվող հատկությունները դրական են, ինչը հուշում է դրական խմբային նույնականացման մասին: Երևանցի երիտասարդներին արցախցիները վերագրում են արտահայտված *տաքարյունություն* և *հյուրասիրություն*: Բացասական հատկություններից վերագրում են *խորամանկությունը* և *շահախնդրությունը,* մինչդեռ սեփական խմբի

Աղյուսակ 2

Երևանցի երիտասարդների կողմից իրենք իրենց, արցախցիների և երևանցիների խմբերին վերագրվող հատկությունների միջինացված տվյալները

Հատկությունների դասակարգումը		
անհատական մակարդակ	երևանցիներին բնորոշ	արցախցիներին բնորոշ
Ընկերասիրություն	Հարգանք	Հյուրասիրություն
Աշխատասիրություն	Հպարտություն	Ներողամտություն
Հյուրասիրություն	Ընկերասիրություն	Ընկերասիրություն
Արժանապատվություն	Հյուրասիրություն	Քննադատողականություն
Հպարտություն	Հայրենասիրություն	Կեղծավորություն
Ազատասիրություն	Արժանապատվություն	Նախանձություն
Հոգատարություն	Հոգատարություն	Հարգանք
Քննադատողականություն	Աշխատասիրություն	Խորամանկություն
Տաքարյունություն	Ազատասիրություն	Բամբասկոտություն
Հայրենասիրություն	Ներողամտություն	Արժանապատվություն
Հարգանք	Տաքարյունություն	Հայրենասիրություն
Ներողամտություն	Քննադատողականություն	Վախկոտություն
Խորամանկություն	Խորամանկություն	Շահախնդրություն
Բամբասկոտություն	Դաժանություն	Հոգատարություն
Շահախնդրություն	Անտարբերություն	Հպարտություն
Դաժանություն	Բամբասկոտություն	Աշխատասիրություն
Անտարբերություն	Նախանձություն	Տաքարյունություն
Նախանձություն	Շահախնդրություն	Անտարբերություն
Կեղծավորություն	Վախկոտություն	Ազատասիրություն
Վախկոտություն	Կեղծավորություն	Դաժանություն

համար դրանք գնահատվում են որպես ոչ բնորոշ հատկություններ:

Երևանցի երիտասարդներն իրենց առավել հաճախ բնորոշ են համարում *ընկերասիրությունը* և *աշխատասիրությունը*, իսկ ցածր արտահայտված՝ *վախկոտությունն* ու *կեղծավորությունը*: Սեփական

խմբին վերագրվող արժեքները հետազոտական այս խմբում ևս խոսում են դրական խմբային նույնականության մասին: Ըստ երևանցի երիտասարդների՝ արցախցու կերպարին բնորոշ արժեքներն են *հյուրասիրությունն* ու *ներողամտությունը*: Հատկանշական է, որ *ազատասիրությունը, հպարտությունը* և *հոգատարությունը* սեփական խմբին տրվող վերագրումներում ունեն բարձր արտահայտվածություն, մինչդեռ համեմատական խմբին վերագրվում են որպես քիչ արտահայտված (տե՛ս *Աղյուսակ 2*):

Խմբերի փոխադարձ ընկալումներում նկատում ենք, ընդհանուր առմամբ, դրական հատկությունների բարձր արտահայտվածություն: Ընդ որում, երևանաբնակ արցախցիներն ավելի մեծ թվով դրական հատկություններ են վերագրում երևանցիներին, քան հակառակը: Չնայած փոխադարձ վերագրումները դրականի միտում ունեն, նկատում ենք, որ դրանցում կան տարբերություններ, այսինքն՝ սեփական և համեմատական խմբերին միմյանցից տարբերվող դրական հատկություններ են վերագրվում, ինչը, կարելի է ասել, սահմանազատման «կառուցողական»՝ ոչ բացասական կողմ է: Այսինքն՝ չնայած խմբերն ունեն հարաբերական սահմաններ միմյանց նկատմամբ, դրանք կարծր չեն և չունեն միջխմբային հաղորդակցություններին խոչընդոտելու պոտենցիալ:

Կարելի է նկատել, որ փոխադարձ վերագրումներում խմբերը միմյանց բնորոշ են համարում *հյուրասիրությունը*, ինչն ընդհանուր առմամբ հայկական հետերոստերեոտիպ է, այսինքն՝ տանում է դեպի ընդհանուր դաշտի որոշակի ընդունում: Հետաքրքիր է, որ արցախցի երիտասարդներն իրենց խմբին ևս բնորոշ են համարել հայրենասիրության հատկանիշը՝ ի տարբերություն երևանցիների: Փոխադարձ վերագրումներում բացասական հատկանիշներից խմբերի ներկայացուցիչները միմյանց վերագրում են *կեղծավորությունը, նախանձը և շահախնդրությունը*: Այս բացասական հատկությունների վերա-

գրումներն էլ փոխադարձ սահմանազատման բացասական կողմն են, ինչի արդյունքում ընկալվող հեռավորությունը մեծանում է:

Սրա մասին են վկայում նաև «Բոգարդուսի սոցիալական դիստանցիաների սանդղակի» մեթոդով ստացված արդյունքները (մեթոդի մասին մանրամասն տե՛ս վերևում): Երևանցի երիտասարդների մոտ առավելագույն դիստանցվածության ցուցանիշ, հարցաթերթում որպես այլընտրանքային համեմատական խմբեր ներառված «գյումրեցիների» և «սփյուռքահայերի» համեմատ, դրսևորվել է արցախցիների խմբից՝ 3,4: Արցախցի երիտասարդների մոտ դիստանցիայի ավելի մեծ ցուցանիշ է դրսևորվում ոչ թե երևանցիների, այլ գյումրեցիների խմբի հանդեպ՝ 3,0 (տե՛ս *Աղյուսակ 3*): Նշվածը թույլ է տալիս եզրակացնել, որ երևանցի երիտասարդների կողմից Երևանում բնակվող արցախցի երիտասարդներն առավել դիստանցված ու կարգայնացված են ընկալվում, քան, օրինակ, գյումրեցիները և սփյուռքահայերը: Այս մասին են վկայում նաև բացասական հատկությունների վերագրումները:

Աղյուսակ 3

Բոգարդուսի սոցիալական դիստանցիաների սանդղակով պարզված միջինացված արդյունքներ

Գնահատվող հետազոտական խմբեր	Գնահատող խմբեր	
	արցախցի երիտասարդներ	երևանցի երիտասարդներ
արցախցիներ	1,1	3,4
երևանցիներ	2,5	1,2
գյումրեցիներ	3.0	1,9
սփյուռքահայեր	2.0	2,6

Հասկանալու համար, թե միջխմբային սահմանների կառուցման հիմքում ինչ գործոններ են ընկած, առանձնացվել և չափվել են *կենսակերպը, բնավորությունը, արժեքները* (որպես տարբերակման գործոններ): Ստացված արդյունքների համաձայն՝ երևանցի երիտասարդները նշանակալի տարբերություն են տեսնում իրենց և արցախ-

ցիների խմբերի միջև՝ *ըստ արժեքների* և *բնավորության*, մինչդեռ *ըստ կենսակերպի* վերագրվող վիճակագրորեն նշանակալի տարբերություններ չեն դիտարկվել: Երևանաբնակ արցախցի երիտասարդների մոտ վիճակագրորեն հավաստի տարբերությունները դրսևորվում են *բնավորության* ու *կենսակերպի* գործոններում, մինչդեռ *արժեքային* տարբերությունները վիճակագրորեն նշանակալի չեն:

Այսպիսով, երևանցի երիտասարդները խմբային համեմատության մեջ առավել նշանակալի են համարում *արժեքային* և *բնավորության* տարբերությունները, իսկ երևանաբնակ արցախցի երիտասարդներն առավել նշանակալի են համարում *բնավորության* և *կենսակերպի* տարբերությունները: Ինչպես տեսնում ենք, *բնավորության* տարբերությունը երկու խմբերի դեպքում էլ միջխմբային սահմանների ընդգծման ընդհանուր գործոն է հանդիսանում:

Անհատական մակարդակում իրենց և սեփական խմբին վերագրվող, ինչպես նաև հետազոտվող խմբերի միջև փոխադարձաբար վերագրվող արժեքները հասկանալու համար մասնակիցները լրացրել են հարցաթերթ Շվարցի բազային արժեքների ուսումնասիրման մեթոդով: Հարցվողները նշել են, թե ըստ իրենց պատկերացումների ներկայացված պնդումները որքանով են բնորոշում իրենց, սեփական խմբին և համեմատվող խմբի երիտասարդներին:

Ստացված արդյունքները ցույց են տալիս, որ *երևանաբնակ արցախցի երիտասարդներն* իրենց անհատական մակարդակում բնորոշ են համարում *ունիվերսալիզմ* և *անվտանգություն* արժեքները, *երևանցիները՝ ունիվերսալիզմ* և *ձեռքբերումներ* արժեքները (տե՛ս *Աղյուսակ 4*):

Այսպիսով, հետազոտվող երկու խմբերի երիտասարդներն էլ և՛ անհատական, և՛ խմբային մակարդակներում իրենց բնորոշ արժեք են համարում *ունիվերսալիզմը,* որի բաղադրիչներն են *հասկացումը, հանդուրժողականությունը, մարդկանց* և *բնության պահպանման ցանկությունը*:

Մինչդեռ բարձր արտահայտվածություն ունեցող մյուս բազային արժեքները խմբերում 2 մակարդակներում էլ տարբերվում են (երևանցիների խմբում՝ *ձեռքբերումներ*, երևանաբնակ արցախցիների խմբում՝ *անվտանգություն*)։ Այս հանգամանքը կարելի է բացատրել առաջնային սոցիալացման միջավայրերի տարբերություններով։ ԼՂՀ-ում սոցիալացված երիտասարդների տարիքային շեմից հետևում է, որ նրանք ծնվել են պատերազմական տարիներին կամ անմիջապես պատերազմի ավարտից հետո, ինչը հասկանալի է դարձնում *անվտանգության* արժեքի առաջնային լինելն այս խմբում։

Աղյուսակ 4

Անհատական մակարդակում և սեփական խմբին վերագրվող բազային արժեքներ

Բազային արժեքներ	Հետազոտական խմբեր			
	(հումանիտար ոլորտում զբաղված վերլուծություն)	ազգային ինքնության ոլորտի վերլուծություն	(հումանիտար ոլորտում զբաղված երևանցի)	ազգային ինքնության ոլորտի երևանցիների
Ունիվերսալիզմ	16,5	13,5	13,6	13,6
Անվտանգություն	13,2	12,6	10,7	10,7
Ձեռքբերում	9,8	10,8	12,7	12,7
Ինքնուրույնություն	11,8	10,5	11,4	11,4
Կամեցողություն	12,4	10,1	10,6	10,6
Կոմֆորմություն	10,1	9,8	10,3	10,3
Ավանդականություն	8,4	8,9	6,6	6,6
Իշխանություն	3,6	7,5	5,8	7,8
Հեդոնիզմ	5,5	7,5	9,9	9,9
Ստիմուլյացիա	7,4	7,1	9,3	10,5

Հատկանշական է, որ երիտասարդների կողմից սեփական խմբին վերագրվող արժեքները բավական նման են անհատական մակարդակում վերագրվող արժեքներին, ինչը թույլ է տալիս եզրակացնել արժեքային մակարդակում ևս դրական խմբային նույնականաց-

ման մասին (տե՛ս *Աղյուսակ 4*): Բազային արժեքներից միայն *իշխանությունն է,* որ խմբերում անհատական մակարդակում, խմբայինի համեմատ, նկատելիորեն ցածր ցուցանիշ ունի:

Աղյուսակ 5

Սեփական և համեմատական խմբին վերագրվող բազային արժեքներ

Բազային արժեքներ	Հետազոտական խմբեր			
	Անհատների ինվեստիցիոն ցիրտան վերլուծությունը	Անհատների ինվեստիցիոն ցիրտան ներքին վերլուծությունը	Անհատների ինվեստիցիոն ցիրտան վերլուծությունը	Անհատների ինվեստիցիոն ցիրտան ներքին վերլուծությունը
Անվտանգություն	11,3	12,6	11,4	10,7
Հեդոնիզմ	10,9	7,5	11,2	9,9
Ձեռքբերում	10,7	10,8	12	12,7
Ունիվերսալիզմ	10,6	13,5	10,1	13,6
Ինքնուրույնություն	10,2	10,5	8,7	11,4
Իշխանություն	9,2	7,5	10,6	5,8
Կամեցողություն	8,8	10,1	9,4	10,6
Ստիմուլյացիա	8,5	7,1	9,2	9,3
Կոմֆորմություն	7,9	9,8	10,5	10,3
Ավանդականություն	5,6	8,9	8,5	6,6

Ինչ վերաբերում է փոխադարձաբար վերագրվող արժեքներին, ապա ստացված տվյալներով երևանաբնակ արցախցիները երևանցիներին վերագրում են.

- **բարձր արտահայտված՝** *անվտանգություն և հեդոնիզմ,*
- **միջին արտահայտված՝** *իշխանություն, ունիվերսալիզմ, ձեռքբերումներ, ինքնուրույնություն,*
- **ցածր արտահայտված՝** *ավանդականություն և կոմֆորմություն:*

Իսկ երևանցիները արցախցիներին բնորոշում են.

- **բարձր արտահայտված՝** *անվտանգություն և ձեռքբերումներ,*

- **միջին արտահայտված՝** *իշխանություն, ունիվերսալիզմ, հեդոնիզմ, կոմֆորմություն,*
- **ցածր արտահայտված՝** *ավանդականություն և ինքնուրույնություն* (տե՛ս *Աղյուսակ 5*):

Այսպիսով, ի տարբերություն սեփականի՝ համեմատական խմբին առավել բնորոշ են համարվում *հեդոնիզմի* և *իշխանության* արժեքները (տե՛ս *Աղյուսակ 5*): Հետևաբար, երկու հետազոտված խմբերն էլ այս արժեքների հիման վրա են կառուցում միջխմբային սահմանները: Ուրեմն, կարող ենք ենթադրել, որ հայ հասարակության արժեիմաստային դաշտում դրանք չեն խրախուսվում: Սրանք այն արժեքներն են, որոնց շարժառիթային հիմքում ընկած է սոցիալական իշխանության ձգտումը, և որոնք ներառված էին *ինքնահաստատման* խմբում, ըստ Շվարցի խմբավորման (տե՛ս *Գծապատկեր 1*):

Բազային արժեքները խմբավորող մյուս՝ *փոփոխություններին բաց լինելու, ինքնահաղթահարման* և *պահպանողականության* արժեքային կողմնորոշումներում խմբերը չունեն ընդգծված տարբերություններ:

Եզրակացություններ

Տեսական և հետազոտական մասերի վերլուծության արդյունքում հանգեցինք հետևյալ հիմնական եզրահանգումներին՝

- երևանցի երտասարդների մոտ արժեքային բաղադրիչը նշանակալի ազդեցություն ունի խմբային ինքնության ձևավորման և միջխմբային սահմանների կառուցման գործընթացում;
- ընդհանուր առմամբ հետազոտական խմբերի փոխադարձ ընկալումներն ունեն դրական միտում: Միաժամանակ, սեփական և համեմատական խմբին վերագրված առաջնահերթ դրական հատկությունների վերագրումները տարբերվում են, ինչը, կա-

րելի է ասել, սեփական խմբի հետ դրական նույնականացման և սահմանազատման «կառուցողական» կողմ է: Բացասական հատկությունների վերագրումներն էլ փոխադարձ սահմանազատման բացասական կողմն են, ինչի արդյունքում ընկալվող հեռավորությունը մեծանում է;

- բազային արժեքների ուսումնասիրման համեմատական վերլուծությունը ցույց տվեց, որ փոխադարձ վերագրումներում խմբերը միմյանց բնորոշ են համարում *ունիվերսալիզմը, ձեռքբերումներն ու անվտանգությունը,* ինչը ևս վկայում է ընդհանուր արժեքային ֆոնի մասին: Միևնույն ժամանակ, խմբերի ներկայացուցիչները միմյանց վերագրում են *հեդոնիզմի և իշխանության* արժեքները, որոնք սեփական խմբերին քիչ են վերագրվում (սա էլ խոսում է ընկալվող տարբերության մասին):

Հուլիս, 2013թ.

Աղբյուրներ և գրականություն

1. *Ш.Шварц,* Культурные ценностные ориентации: природа и следствия национальных различий, Психология. Журнал Высшей школы экономики, 2008. Т. 5, № 2. С. 37–67.
2. *Карандашев В.Н.,* Методика Шварца для изучения ценностей личности: концепция и методическое руководство, СПб., Речь, 2004.
3. *Калиненко В.К.,* Границы в культуре и культура на границах, 2008, №1, http://psyjournal.ru/psyjournal/articles/detail.php?ID=2833
4. *Рягузова Е.В.,* ‘Виды и функции границ в психологических исследованиях, http://www.sgu.ru/files/izvestia/full/2011-1-19.pdf

ЦЕННОСТНЫЙ КОМПОНЕНТ ВНУТРИКУЛЬТУРНЫХ ГРАНИЦ
(на примере ереванцев и живущих в Ереване арцахцев)

Лилит Акопян

Резюме

Говоря об армянской культуре, исследователи обычно отмечают ее пограничное положение между Востоком и Западом, многообразие и неоднозначность ее образа. Помимо этого, во внутрикультурном контексте тоже есть свои дифференциации, связанные с территориальными (областными) идентичностями. В статье рассматриваются эти внутрикультурные границы и роль ценностных ориентаций в них. Исследование проводилось среди ереванцев и живущих в Ереване арцахцев и призвано было выяснить, на каких факторах основаны разграничения между ними и насколько в этом проявляется ценностный компонент.